ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 72 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում կազմակերպել ավտոկայանատեղեր՝ համաձայն հավելվածի.

2. Առաջարկել Գյումրու քաղաքապետին՝ սույն որոշման հավելվածում նշված փողոցներում կամ հրապարակներում ավտոկայանատեղեր կազմակերպելու հստակ տեղերը, սահմանները և ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կայանման ձևը նախապես համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի ոստիկանության հետ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղեր կարող են կազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական, շինարարական և այլ նորմերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով չթույլատրվող գոտիների կամ հատվածների, հաշվի առնելով տվյալ տարածքի առանձնահատկությունները և ավտոկայանատեղ կազմակերպելու նպատակահարմարությունը, ընդ որում՝

1) փողոցի երթևեկելի գոտում՝ միայն երթևեկելի մասի եզրի երկարությամբ ավտոտրանսպորտային միջոցների հաջորդական տեղաբաշխմամբ՝ պայմանով, որ չարգելափակվեն բակային մուտքերը,

2) փողոցի երթևեկելի մասի տեղային լայնացում ունեցող հատվածում՝ ավտոտրանսպորտային միջոցների՝ միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Ավտոկայանատեղերի գործունեությունը կազմակերպվում է Գյումրի համայնքի ղեկավարի կամ Գյումրի համայնքի ենթակայության կազմակերպության կողմից: Գյումրու համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք գանձում են տուրք՝ Գյումրու քաղաքապետի հետ կնքված պայմանագրին համապատասխան:

5. Ավտոկայանատեղի կազմակերպիչը տուրքը գանձում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն և Գյումրու համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ (որոշումներով) սահմանված դրույքաչափերի սահմաններում և վճարման ձևին համապատասխան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից :

Կողմ (11) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան_____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

Ց Ա Ն Կ

Գյումրու համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոկայանատեղերի

1	Պ. Սևակի փողոց
2	Խորենացի փողոց
3	Շիրակացի փողոց
4	Գայի փողոց
5	Գորկու փողոց
6	Սայաթ-Նովա փողոց
7	Տիգրանյան փողոց
8	Տերյան փողոց
9	Բագրատունյանց /Խաղաղության/ օղակ
10	Երևանյան խճուղի
11	Գ. Նժդեհի հրապարակ
12	Կայարանամերձ հրապարակ
13	Ղանդիլյան փողոց
14	Խրիմյան Հայրիկի փողոց
15	Թբիլիսյան խճուղի
16	Անկախության /Հայուհու/ հրապարակ
17	Ա. Մանուկյան փողոց
18	Գ.Նժդեհի փողոց
19	Մանուշյան փողոց
20	Հաղթանակի պողոտա
21	Շառլի հրապարակ
22	Արագած փողոց
23	Սպանդարյան փողոց
24	Ջիվանու փողոց
25	Սչորսի փողոց
26	Շահումյան փողոց
27	Ախուրյանի խճուղի

Քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ՝ **Հ.Կարապետյան**